ԿԱՐԾԻՔ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»», «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»», ««ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»», «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին օրենքում» լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»», ««Բաժնետիրական ընկերությունների մասին»» օրենքում լրացումներ կատարելու մասին»», «Սնանկության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ նախագծերը[1], գտնում ենք, որ դրանցում տեղ են գտել այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են հետընթաց ապահովել կոռուպցիայի դեմ պայքարում, խաթարել «իրական շահառու» ինստիտուտի էությունը և ստեղծել խտրական մոտեցում ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց շրջանում:

Այսպես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին օրենքում» լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»» նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 12-րդ հոդվածով նախատեսվում է փոփոխություն կատարել համանուն օրենքի 60.1-րդ հոդվածում, ըստ որի՝ *«3-րդ մասում «չեն տարածվում» բառերից հետո լրացնել «պետական կամ*

[1] https://www.e-draft.am/projects/5759

համայնքային մասնակցությամբ ընկերությունների, որոնց բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 100 տոկոսն ուղղակիորեն պատկանում է պետությանը կամ համայնքին, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից հիմնադրված հիմնադրամների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև» բառերը:

Ստացվում է, որ այս փոփոխության ուժով այն պետական կամ համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները, որոնց բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 100 տոկոսն ուղղակիորեն պատկանում է պետությանը կամ համայնքին, ինչպես նաև այն ոչ առևտրային պետական կամ համայնքային կազմակերպությունները, որոնք հիմնադրվել են ՀՀ-ի կամ համայնքի կողմից՝ ազատվում են իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու օրենսդրական պարտականությունից:

Գտնում ենք, որ այս փոփոխությունը հետընթաց է կոռուպցիայի դեմ պայքարում, այն ամբողջությամբ հակասում է իրական շահառուի էությանը և սկզբունքներին, որոնք ենթադրում են և նախատեսում են իրական շահառուների մասին տեղեկությունների հասանելիություն, այդ գործում հնարավորինս կենտրոնացված գրանցամատյանների ստեղծում, անդրադառնում են որոշ ֆինանսական գործիքների և բաժնային մասնակցությամբ կառուցվածքների ռիսկայնությանը և մի շարք այլ ելակետային դրույթների, որոնք կարևոր ուղեցույց են փողերի լվացման, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպման համար: Այս փոփոխությունը վերը թվարկված կազմակերպություններին դարձնում է արտոնյալ և տալիս է իրավական հնարավորություն գործել ոչ թափանցիկ և ոչ հաշվետու:

Ի սկզբանե, երբ ներդրվեց իրական շահառուների ինստիտուտը, դրա ներդրումը կատարվեց փուլային տարբերակով՝ սկսելով առավել ռիսկային ոլորտներից: Մասնավորապես՝ սկզբնական փուլում ինստիտուտը ներդրվեց գնումների ոլորտում, հետո՝ ՁԼՄ-ների և հանքարդյունաբերության ոլորտներում, իսկ ապա ստացավ լայն տարածում, և այժմ բոլոր տեսակի իրավաբանական անձինք, առանց բացառության, ներկայացնում են իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր: Այժմ, ստացվում է, որ եթե ՀՀ-ի մասնակցությամբ (բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 100 տոկոս ուղղակի մասնակցությամբ) հիմնադրվում է առևտրային կազմակերպություն, օրինակ՝ հանքարդյունաբերության ոլորտում, ուստի՝ անկախ դրա ռիսկայինության բարձր մակարդակից, ազատվում է իրական շահառու հայտարարագիր ներկայացնելուց, և դրանից բխող այլ օրենսդրական պահանջներից, գործում է ոչ թափանցիկ և ոչ հաշվետու:

Այս փոփոխությունն առաջ բերող հաջորդ վտանգը դա նախադեպն է: Մասնավորապես, համանման բացառություններ կարող են պահանջել նաև մյուս տեսակի իրավաբանական անձինք, այդ թվում առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները: Ընդ որում, օրինակ՝ ՀԿ-ների դեպքում այդ պահանջը կարող է ավելի հիմնավոր լինել, քան օրինակ՝ պետության 100 տոկոս ուղղակի մասնակցությամբ առևտրային կազմակերպության, ՀՈԱԿ-ների կամ ՊՈԱԿ-ների դեպքում:

Նաև հարկ է նշել, որ ուսումնասիրելով ներկայացրած նախագծերի հիմնավորումները, այս փաթեթի **հեղինակները որևէ օբյեկտիվ, փաստարկված և**

կարիքահեն հիմնավորում չեն ներկայացրել 60-րդ հոդվածում վիճելի և խնդրահարույց փոփոխությունը կատարելու համար։

Ինչ վերաբերում է, այն **ենթադրյալ հիմնավորմանը**, թե Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը ծանրաբեռնված է իրական շահառուների հայտարարագրման համակարգով, ապա հարկ է նշել, որ ծանրաբեռնվածության խնդիրը չի լուծվում այս փոփոխության ուժով։ Նախ, հրապարակայնորեն հայտնի չէ, թե ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանցից քանիսին են ա/ պետական կամ համայնքային մասնակցությամբ ընկերություններ, որոնց բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 100 տոկոսն ուղղակիորեն պատկանում է պետությանը կամ համայնքին, բ/ ՀՀ-ի կամ համայնքի կողմից հիմնադրված հիմնադրամներ, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, որի դեպքում հնարավոր կլիներ պատկերացում կազմել թե այս փոփոխության հետևանքով քանի տոկոսով է նվազեցվելու ծանրաբեռնվածությունը։ Եվ երկրորդ, ծանրաբեռնվածության հարցը հարկ էր լուծել նախքան 2023 թվականը, երբ իրավաբանական անձանց համար ներդրվեց իրական շահառուների համընդհանուր հայտարարագրման համակարգը, հետևապես այն **ենթադրյալ հիմնավորումը ևս փաստարկված չէ։**

Նաև հարկ է նշել, որ Նախագիծը չի անցնել մասնագիտական և մասնակցային հանրային քննարկում, այն միայն ներկայացվել է e-draft.am կայքում, այն դեպքում երբ իրական շահառուի ինստիտուտի ներդրման գործընթացը ԻՀԱ-ից և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայից պահանջել է երկարատև ջանքեր և երկխոսություն կառավարության հետ։

Վերոգրյալի հիման վրա՝

1. գտնում ենք, որ քննարկվող փոփոխությունը հիմնավոր չէ, այս ստեղծում է արտոնյալ պայմաններ որոշակի տեսակի իրավաբանական անձանց համար, ամբողջությամբ հակասում է իրական շահառուի էությանն ու սկզբունքներին, և կարող է ստեղծել վտանգավոր նախադեպեր՝ թուլացնելով այս ինստիտուտի հակակոռուպցիոն ազդեցությունն ու անլրջացնելով դրա կարևորությունը,
2. կոչ ենք անում Նախագծի հեղինակին՝ ՀՀ արդարադատության նախարարությանը, հետ կանչել այս նախագիծը, սկսել հանրային քննարկում շահագրգիռ և մասնագիտացված կառույցների հետ, և համատեղ քննարկել այս Նախագծի նպատակահարմարության հարցը։

Իրավաբանների հայկական ասոցիացիա

17 հուլիս, 2023 թվական